Հաստատված է Խ.Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2010թ. նոյեմբերի 19-ի նիստում

Ռեկտորի պաշտոնակատար՝ Ռ.Կ. Միրզախանյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԽԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՀՊՄՀ) ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՊՄՀ-ի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները և գիտական խորհրդի կանոնակարգը:

1.2. Սույն կանոնակարգը կարգավորում է գիտական, կրթական, ուսումնամեթոդական բնագավառներում ձեռք բերած նվաճումների համար ՀՊՄՀ-ի աշխատակիցներին և արտերկրի ներկայացուցիչներին համալսարանի պատվավոր կոչումներ և պարգևներ շնորհելու կարգը:

1.3. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի որոշմամբ՝ ռեկտորի հաստատման օրվանից:

1.4. ՀՊՄՀ-ի պատվավոր կոչումների և պարգևների թեկնածուներ կարող են առաջադրել համալսարանի գիտական խորհուրդը և ռեկտորատը՝ համապատասխան ֆակուլտետների խորհուրդների ներկայացմամբ:

Համալսարանը կարող է նաև իր աշխատակիցներից ներկայացնել թեկնածուներ՝ հանրապետական, միջազգային պարգևներ և կոչումներ ստանալու համար:

2. ՀՊՄՀ-ի բարձրագույն պարգև «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ» մեդալ.

Շնորհվում է մանկավարժական գործունեության բնագավառում և գիտակրթական համակարգում ակնառու ծառայություններ մատուցած անհատներին, համալսարան այցելած հանրապետության և արտերկրի՝ բարձաստիճան հյուրերի միջազգային ճանաչում ունեցող ականավոր գիտնականներին և մանկավարժներին:

3. ՀՊՄՀ-ի «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» մեդալ.

Շնորհվում է համալսարանի լավագույն աշխատակիցներին՝ երկարամյա անբասիր աշխատանքի համար:

4. ՀՊՄՀ-ի «Պատվավոր դոկտոր» կամ «Պատվավոր պրոֆեսոր» կոչում շնորհվում է

2.1. Արտերկրի միջազգային ճանաչում ունեցող դոկտորներին, պրոֆեսորներին և համալսարան այցելած բարձրաստիճան հյուրերին՝ արդյունավետ համագործակցության համար:

2.2. Համալսարանի աշխատակիցներին երկարատև աշխատանքային գործունեության և գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում ցուցաբերած ավանդի համար:

5. ՀՊՄՀ-ի «Ամբիոնի պատվավոր վարիչ» կոչում շնորվում է

Երկարամյա ամբիոնի վարիչի պաշտոն զբաղեցրած և գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում մեծ ավանդ ցուցաբերած անձանց: